# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ Ու Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 27

### ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ 09.12.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Բարձրաշեն համայնքի 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

2.Բարձրաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափի, համայնքապետարանի աշխատակազմի և <<Բարձրաշենի մանկապարտեզ>>-ի (համայնքային ոչ առևտրային կազմակերպություն) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3.Բարձրաշենի համայնքապետարանի ամենամյա գույքագրման արդյունքների հաստատման մասին:

4.Բարձրաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին:

5.Ընթացիկ հարցեր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 28-Ն

### ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Բարձրաշեն համայնքի 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 1
Բարձրաշեն համայնքի ավագանու
09-ը դեկտեմբերի 2019թ.
թիվ 28-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնքում սահմանվում են 2020թ. տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ - 7.500 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25.000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2.500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1.500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար 2.500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30.000 դրամ.

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2.700 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.600 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.100 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.900 դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24.000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 2.700 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.600 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.100 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.900 դրամ,
- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 24.000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3.000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.500 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6.000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 600 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.200 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.400 դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.500 դրամ.

9) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.050 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10). Հայաստանի Հանրապետության Բարձրաշեն համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

11). համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3.000 դրամ:

2.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնքի 2020 թվականի տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականցումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1.000 դրամ.

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ.

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2500 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2500 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1.000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1500 դրամ.

7) <<Բարձրաշենի մանկապարտեզ>> /համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/- ում

հաճախող յուրաքանչյուր երեխայի համար վճարի չափ սահմանել ամսական –5.000 դրամ.

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար.

9) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ.

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.500 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 4. 000 դրամ, իսկ համայնքում

10).իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար – 25 դրամ /1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 5դրամ /1քառ.մ/.

գ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար – 2 դրամ /1քառ.մ./.

11). համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ վճարները՝

1. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ.

2. ծննդօգնություն՝

2.1. թեթև միջամտություն -1.000 դրամ.

2.2. ծանր միջամտություն -5.000 դրամ.

3.արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանր կենդանի-100դրամ, խոշոր կենդանի - 200դրամ, բացառությամբ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.

4.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200դրամ.

5.ախտահանություն -1 քմ 200 դրամ.

6.միջատազերծում(դեզինսեկցիա) - 1 քմ 100 դրամ.

7.կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) -1 քմ 200 դրամ.

8.արհեստական սերմնավորում -5.000 դրամ.

9.կենդանու հերձում՝ մանր կենդանի -1.000դրամ,
խոշոր կենդանի -3.000դրամ.

10. կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի -1.000 դրամ,
խոշոր կենդանի -2.000դրամ.

11. կենդանիներին ախտապանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝
մանր կենդանի-1.000 դրամ,
խոշոր կենդանի-2.000դրամ.

12.կենդանիների հետսպանդային զննում ( մինչև 2020թ.հուլիս ամիսը)՝
մանր կենդանի -1.000 դրամ,
խոշոր կենդանի -2.000դրամ:

Աշխատակազմի քարտուղար Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ Ու Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 29

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲԱՐՁՐԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով և աշխատանքային օրենսգրքի 179-րդ հոդվածի. պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Բարձրաշեն համայնքի 2020 թվականի համայնքի ղեկավարի պաշտո նային դրույքաչափը, համայնքապետարանի աշխատակազմի և <<Բարձրաշենի մանկ ապարտեզ>>-ի (համայնքային ոչ առևտրային կազմակերպություն) աշխատակիցների . թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 1
Բարձրաշեն համայնքի ավագանու
«09 » դեկտեմբերի 2019 թվականի
թիվ 29 որոշման

# ԲԱՐՁՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | 2020թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 330.000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 225.000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 269.450 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ (ԺԱՊ) (3.1-1) | 1 | 186.400 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-1) | 1 | 93.700 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1) | 1 | 92.700 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| Գեղմասվար | 1 | 102.000 |
| Հարկահավաք | 1 | 141.400 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Պահակ | 1 | 96.800 |
| Հավաքարար | 1 | 89.700 |
| Բանվոր | 1 | 96.800 |
| Ընդամենը | 11 | 1723.950 |

Աշխատակազմի քարտուղար` Ն.Մարգարյան

Հավելված 2
Բարձրաշեն համայնքի ավագանու
«09» դեկտեմբերի 2020 թվականի
թիվ 29 որոշման

ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<*Բարձրաշենի մանկապարտեզ*>> (համայնքային ոչ առևտրային կազմակերպություն)

1. Աշխատակիցների թվաքանակը - 14

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | 2020թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Վարիչ | 1 | 137.000 |
| Դաստիարակ | 4 | 240.000 |
| Դաստիարակի օգնական | 1 | 94.000 |
| Խոհարար | 1 | 94.000 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 65.000 |
| Հաշվապահ | 0.5 | 65.000 |
| Պահակ | 1 | 89.700 |
| Երաժշտության դաստիարակ | 0.5 | 65.000 |
| Դռնապան/1000-1200քմ.հողատարածք/ | 1 | 92.700 |
| Բուժ - քույր | 1 | 92.700 |
| Դայակ | 1 | 94.000 |
| Ընդամենը | 14 | 1129.100 |

Աշխատակազմի քարտուղար Ն.Մարգարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ Ու Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30

### ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բարձրաշեն համայնքի սեփականության 2019 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 1
Բարձրաշեն համայնքի ավագանու
<<09>>դեկտեմբերի 2019 թվականի
թիվ 30 որոշման

# Բարձրաշենի համայնքապետարանի հիմնական միջոցների գույքացուցակը

| Հ/Հ | Տարեթիվ | Գույքի անվանումը | Քանակը | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1972 | Գյուղապետարանի շենք | 1 | 8510000 | 8510000 |
| 2 | 2006 | Սեղան համակարգիչի | 1 | 74800 | 74800 |
| 3 | 2008 | Տնօրենի սեղան | 1 | 160000 | 160000 |
| 4 | 2008 | Գրապահարան ապակիով | 2 | 70000 | 140000 |
| 5 | 2008 | Գրապահարան պրոֆիլով | 2 | 75000 | 150000 |
| 6 | 2008 | բազմոց | 1 | 70000 | 70000 |
| 7 | 1995 | կասսա | 3 | 50000 | 150000 |
| 8 | 2008 | սեղան /ժուռնալնիկ/ | 1 | 43500 | 43500 |
| 9 | 2008 | սեղաններ | 4 | 40000 | 160000 |
| 10 | 2008 | սառնարան | 1 | 200000 | 200000 |
| 11 | 2013 | պրոցեսր | 1 | 59000 | 59000 |
| 12 | 2013 | պրոցեսր | 2 | 33000 | 66000 |
| 13 | 2013 | մայրպլատա | 1 | 23000 | 23000 |
| 14 | 2013 | մայրպլատա | 2 | 23000 | 46000 |
| 15 | 2013 | մանիտոր | 2 | 44000 | 88000 |
| 16 | 2013 | Օպերատիվ հիշողություն | 3 | 15000 | 45000 |
| 17 | 2013 | Կոշտ դիսկ | 3 | 28000 | 84000 |
| 18 | 2013 | Տպիչ բազմաֆունկցիոնալ | 1 | 105000 | 105000 |
| 19 | 2013 | տպիչ | 1 | 100000 | 100000 |
| 20 | 2009 | տպիչ | 1 | 95000 | 95000 |
| 21 | 2017 | համակարգիչ | 1 | 200000 | 200000 |
| 22 | 2017 | տպիչ | 1 | 80000 | 80000 |
| 23 | 2014 | համակարգիչ G-16-20 | 1 | 200000 | 200000 |
| 24 | 2014 | համակարգիչ -G -23-20 | 1 | 200000 | 200000 |
| 25 | 2015 | Աթոռ համակարգիչի | 2 | 35500 | 71000 |
| 26 | 2015 | Աթոռ համակարգիչի | 1 | 68000 | 68000 |
| 27 | 2015 | Աթոռ համակարգիչի | 1 | 43000 | 43000 |
| 28 | 2016 | Ավտոկանգառների սպասարահ | 3 | 33000 | 990000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | 2015 | Մանկական խաղահրապարակ | 1 | 990000 | 990000 |
| 30 | 2013 | պատուհաններ | 11 | 90000 | 990000 |
| 31 | 2017 | դուռ | 1,6քմ | 27.3 | 43.7 |
| 32 | 2017 | պատուհան | 2.9քմ | 31.4 | 91.2 |
| 33 | 2007 | աթոռ | 10 | 10500 | 105000 |
| 34 | 2007 | աթոռ | 8 | 13750 | 110000 |
| | | | | | |

Գույքագրման հանձնաժողովի կազմը
Հանձնաժողովի նախագահ Ն.Մարգարյան
անդամներ Ս.Հակոբյան
Վ.Գեղամյան
Ա.Գրիգորյան
Ա.Իսկանդարյան

Հավելված 2
Բարձրաշեն համայնքի ավագանու
<<09>>դեկտեմբերի 2019 թվականի
թիվ 30 որոշման

# Բարձրաշեն համայնքի կուլտուրայի տան հիմնական միջոցների գույքացուցակը

| Հ/Հ | Ստացման տարեթիվը | գույքի անվանումը | գույքի քանակը | գինը | գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1994 | Գեղարվեստական նկար<<,զարուն>> | 1 | 7290 | 7290 |
| 2 | 1994 | Գեղարվեստական նկար՝ <<Սևան>> | 1 | 14400 | 14400 |
| 3 | 1994 | Գեղարվեստական նկար՝ <<Լեռնային գյուղ>> | 1 | 8600 | 8600 |
| 4 | 1994 | Գեղարվեստական նկար՝ <<Գառնիի ձոր>> | 1 | 16000 | 16000 |
| 5 | 1994 | Գեղարվեստական նկար <<Աշնան սարեր>> | 1 | 8600 | 8600 |
| 6 | 1994 | Գեղարվեստական նկար<<Առավոտ>> | 1 | 16000 | 16000 |
| 7 | 1994 | Գեղարվեստական նկար<<Լոռի>> | 1 | 7290 | 7290 |
| 8 | 1994 | Կինոյի աթոռներ | 50 | 4000 | 200000 |
| 9 | 2017 | պատուհան | 1.6քմ | 22500 | 432000 |
| 10 | 2017 | դուռ | 3.8քմ | 258/00 | 117800 |
| 11 | 2017 | պատուհանագոգ | 4.2քմ | 5000 | 25200 |
| 12 | 1972 | Կուլտուրայի տան շենք | 1 | 1073000 | 1073000 |

Գույքագրման հանձնաժողովի կազմը՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մարգարյան
անդամներ՝ Ս.Հակոբյան
Վ.Գեղամյան
Ա.Գրիգորյան
Ա.Իսկանդարյան

Հավելված3 .
Բարձրաշեն համայնքի ավագանու
<<09>>դեկտեմբերի 2019 թվականի
թիվ 30 որոշման

Բարձրաշեն համայնքի մանկապարտեզի հիմնական միջոցների գույքացուցակը

| Հ/Հ | Ստացման տարեթիվ | Անվանումը | Քանակը | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1995 | դաշնամուր | 2 | 40000 | 80000 |
| 2 | 1998 | գեղարվեստ. նկարներ/հին/ | 5 | | |
| 3 | 2016 | երկ/հարկ. մանկ.մահճակալ աստիճանով | 30/30 | 85000 | 255000 |
| 4 | 2016 | ներքնակներ | 60 | 11000 | 660000 |
| 5 | 2016 | սպիտակեղեն | 60 | 2500 | 150000 |
| 6 | 2016 | խաղալիքներիպահարան | 4 | 55000 | 220000 |
| 7 | 2016 | Անհատական պահարան | 60 | 8000 | 480000 |
| 8 | 2016 | Մանկական աթոռներ | 60 | 8000 | 480000 |
| 9 | 2016 | Մանկական սեղաններ | 15 | 25000 | 375000 |
| 10 | 2016 | Ուսուցչական սեղաններ | 2 | 52000 | 104000 |
| 11 | 2016 | Սառնարան | 1 | 155040 | 155040 |
| 12 | 2016 | լուսամփոփներ | 18 | 2000 | 36000 |
| 13 | 2017 | Կշեռք էլեկտրական/40կգ/ | 1 | 14000 | 14000 |
| 14 | 2016 | Լվացարան ամանների . | 1 | 15600 | 15600 |
| 15 | 2016 | սեղան /ներձ./ | 2 | 40000 | 80000 |
| 16 | 2016 | Խոհանոցի սեղան | 1 | 45000 | 45000 |
| 17 | 2017 | գեզեռ | 1 | 39500 | 39500 |
| 18 | 2017 | գազօջախ /4 աչք / | 1 | 400000 | 400000 |
| 19 | 2017 | Սեղան աշխատ.դարակով | 2 | 160000 | 320000 |
| 20 | 2017 | Լվացարան երկտեղանի | 1 | 229000 | 229000 |
| 21 | 2017 | Դեղերի պահարան | 1 | 75000 | 75000 |
| 22 | 2017 | Տափչան ցածր.սև մետաղ. կարկասով,փափուկ պարկելատեղով: | 1 | 70000 | 70000 |
| 23 | 2017 | գորգ | 2 | 50000 | 100000 |
| 24 | 2016 | Ջեռուցման կաթսա | 1 | 400000 | 400000 |
| 25 | 2016 | նասոս | 1 | 35000 | 35000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | 2016 | Մանկական կառուսելներ | 2 | 95000 | 190000 |
| 27 | 2016 | Մանկական ճոճոնակ | 2 | 95000 | 190000 |
| 28 | 2016 | մանկակ.խաղ.նժույգ | 2 | 90000 | 180000 |
| 29 | 2016 | մանկակ.խաղ.սղարան | 2 | 95000 | 190000 |
| 30 | 2016 | Մանկական նստարաններ | 8 | 30000 | 240000 |
| 31 | 2016 | Օդափոխիչներ | 3 | 119000 | 357000 |
| 32 | 2016 | օդափոխիչ | 1 | 143000 | 143000 |
| 33 | 2016 | սանհանգույց/ունիտազ/ | 4 | 25000 | 100000 |
| 34 | 2016 | սանհանգույց/լվացարան/ | 5 | 30000 | 150000 |
| 35 | 2016 | Ջեռուցման մարտկոցներ | 150 | 5000 | 750000 |
| 36 | 2017 | կառնեզներ | 12 | 8000 | 96000 |
| 37 | 2017 | Տակդիր գազօջախի համար | 1 | 90000 | 90000 |
| 38 | 2017 | գրապահարան | 1 | 110000 | 11000 |
| 39 | 2017 | գրասեղան | 1 | 35000 | 35000 |
| 40 | 2017 | աթոռ | 10 | 10000 | 100000 |
| 41 | 2017 | Համակարգիչի սեղան | 1 | 45000 | 45000 |
| 42 | 2017 | կառնիզներ | 8 | 3650 | 29200 |
| 43 | 2017 | ունիտազ | 1 | 28500 | 28500 |
| 44 | 2017 | Ունիտազի բաչոկ | 1 | 16000 | 16000 |
| 45 | 1973 | շենքը | 1 | 4134000 | 4134000 |
| 46 | 2018 | Նկար սպիտակաձյունիկ նվեր | 1 | 60000 | 60000 |
| 47 | 2018 | Էլ Վառարան | 4 | 12000 | 48000 |
| 48 | 2018 | Սեղան փոքր նվեր | 2 | 10000 | 200000 |
| 49 | 2018 | Գրատախտակ նվեր | 1 | 15000 | 15000 |
| 50 | 2019 | Աթոռ գրասենյակային /նվեր/ | 3 | 5000 | 15000 |
| 51 | 2019 | Գրասեղան /նվեր/ | 2 | 25000 | 50000 |
| 52 | 2019 | Դահլիճի աթոռ փոքր /նվեր/ | 6 | 5000 | 30000 |
| 53 | 2019 | Գորգ դահլիճի /նվեր/ | 1 | 30000 | 30000 |
| 54 | 2019 | Էլ. կշեռք 100կգ /նվեր/ | 1 | 4500 | 4500 |
| | Ընդ. | | | | 12165340 |

Գույքագրման հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մարգարյան

անդամներ Ս.Հակոբյան

Վ.Գեղամյան

Ա.Գրիգորյան

Ա.Իսկանդարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31-Ն

### ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1- ին  կետի 5-րդ ենթակետով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Բարձրաշեն համայնքի 2020 թվականի բյուջեն՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 1

Բարձրաշեն համայնքի ավագանու
«09» «դեկտեմբերի» 2020թվականի
թիվ 31-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

Եկամուտների գծով - 45199.800 դր.
Ծախսերի գծով - 45199.800 դր.
Ֆոնդային բյուջե - -----------
Դոտացիա - 35086.800 դր.

Եկամուտները ըստ առանձին հարկատեսակների՝
1.Հարկային եկամուտներ - 6429.600դր.
այդ թվում հողի հարկ - 1286.600 դր.
ֆիզիկական անձանցից - 1240.000 դր.
իրավաբանական անձանցից - 46.600 դր.
Գույքահարկ - 5143.000դր.
որից շենքի - 112.000 դր.
իրավաբանական անձանցից - 45.000դր.
ֆիզիկական անձանցից - 67.000դր.
փոխադրամիջոցից - 5031.000դր.

Տեղական տուրքեր - 173.400դր.
շենք-շինության թույլտվություն - 15.000դր.
ծխախոտի վաճառքի թույլտվություն - 79.200դր.
ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն- 79.200դր.

2.Դոտացիա - 35086.800 դր.

3.Ոչ հարկային եկամուտներ - 3600.000դր.
որից ծնողական գումար - 1750.000դր.
մուտք աղբահանությունից - 1550.000դր.
հողի վարձավճար - 210.000դր.

4.Հողի օտարումից մուտքեր - -----------

5.Տարեսկզբի մնացորդ - -----------

Ծախսերը ըստ առանձին հիմնարկների՝- 45116.400դր.
1.Կառավարման ապարատ - 23735.400 դր.
2.Մանկապարտեզ - 12700.000 դր.
3.Մշակույթի տուն - 1874.400 դր.
4.Աղբահանություն - 1550.000 դր.
5.Անասնաբուժական ծառայություն - 1440.000դր.

6.Այլ նպաստներ - 500.000 դր.
7.Նպաստ ծնված երեխաներին - 500.000դր.
8.Հուղարկավորության նպաստներ - 300.000դր.
9.Պահուստային ֆոնդ -1600.000դր.
10.Գույքի նկատ. իրավ. գրանց. - 300.000դր.
11.Ջրահեռացում - 500.000դր.
12.Նվիրատվութ.այլ կազմակերպ. - 200.000դր.

Ընդամենը վարչական բյուջե - 45199.800դրամ:

Աշխատակազմի քարտուղար Ն.Մարգարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

### ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.03.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 20.03.2019 թվականի թիվ 10 որոշման հավելվածի 2-րդ կետում, <<հողամասի ծածկագիրը>> սունյակում գրված <<0119-0002>> թվերի փոխարեն կարդալ <<0131-0009>>թվերը, իսկ <<հողամասի մակերեսի չափը/հա/>> սյունակում գրված <<0.44>> թիվի փոխարեն կարդալ <<0.14>>:

2.Նույն հավելվածի 16-րդ կետից հետո լրացնել նոր՝ 17-րդ կետը հետևյալ նախադասությամբ՝<<17. Սուքիասյան Մերի - 0131-0016 - վարելահող - կորիզ - 2019-2023թ.թ. - 0.38հա>>:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ